

պումներ, որոնք չեն կարող ստվեր գցել կատարված աշխատանքի վրա:

Հայոց իրականության մեջ Վեպի անցած ճանապարհի պարբերացումը թերևս կարելի է սրբագրել, երկուսի փոխարեն ընդունելով երեք փուլ. Ա) Ե—ԺԳ դարեր (Հ. Սիմոնյանի ձևակերպումով՝ Նախնական բնագիր). Բ) ԺԴ—ԺԶ դարեր, գործում միջամտության շրջան, երբ գրվում են չափածո և արձակ ընդմիջարկությունները. Գ) ԺԵ—ԺԹ դարեր, երբ կորագիծը ներքև է հակվում, բայց չի մարում հետաքրքրությունը Վեպի նկատմամբ, ստեղծվում են նոր թարգմանություններ, խմբագրություններ (նաև բանահյուսական տարբերակ):

Թեպետ համոզիչ են Մովսես Խորենացուն Վեպի թարգմանիչ համարելու օգտին խոսող փաստերը, կարծում ենք, այնուամենայնիվ, պետք չէ անվերապահորեն նրան վերագրել այդ գործը: Առավել ևս չի կարելի վստահորեն պնդել, թե Խորենացին Աղեքսանդրի պատմությունը թարգմանել է մոտավորապես 70-ամյա հասակում, երբ Սահակ Բագրատունին խնդրեց գրել «Հայոց պատմությունը», այսինքն՝ Ե դարի 80-ական թվականներին:

Իբրև անհաջող ձևակերպման, ավելի ճիշտ անհաջող բառօգտագործման օրինակ կարելի է հիշել քննական հրատարակության Առաջաբանի խոսքը, որի համաձայն ԺԷ—ԺԹ դարերում «հանդես են գալիս նյութի անհատական մշակումներ՝ նորագույն խմբագրություններ, հավաստելով, որ օտար հուշարձանը սեփականելու դարավոր փորձը դեռ իր լինելության մեջ է» (էջ 2, ընդգծումը մերն է): Հասկանալի է, անշուշտ, խոսքը իրացման, տեղայնացման (և բնավ ոչ սեփականելու) մասին է:

Այս կարգի նկատողությունները, ինչպես սուսցինք, չեն ստվերում կատարված գնահատելի աշխատանքը և նսեմանում են ուսումնասիրության բազում արժանիքների կողքին: Հայ թարգմանական գրականության կոթողներից մեկը մատուցվել է ընթերցող հասարակայնությանը արժանավոր մի հրատարակությամբ: Դա կարևոր նվաճում է նաև շնորհանդրապես հելենիստական այս հուշարձանի ուսումնասիրության բնագավառում:

Ա. Ա. ԽՈՒՎԱՎԵՐԴՅԱՆ

Պ. Մ. Պողոսյան, Խոսի մշակույթի և ռեազիտության հիմունքներ. Երևանի համալսարանի հրատարակչություն, գիրք Ա, 1990 թ., 423 էջ, գիրք Բ, 1991 թ., 335 էջ:

Ռեազիտությունը և առավել ևս՝ խոսքի մշակույթի հիմունքները համեմատաբար երիտասարդ գիտաճյուղ է լեզվաբանական գիտությունների համակարգում, բայց, արդեն երկար տարիներ է, ինչ որպես ուսումնական դասընթաց դասավանդվում է բուհերի բանասիրական բաժիններում: Դեռ ավելին՝ վերջին տարիներին փոքր ժամաքանակով ռեազիտության առանձին բաժիններ ուսուցանվում էին նաև միջնակարգ դպրոցի քարձր դասարաններում: Հատկապես 80-ական թվականներից ի վեր ռեազիտության, մասնավորապես գեղարվեստական գրականության և առանձին հեղինակների լեզվի և ոճի, նրանց խոսքարվեստի մասին գրվել են ուշագրավ մեծագրություններ, ուսումնասիրություններ, բարարան-տեղեկատուներ, բայց և այնպես անլիճելի է, որ այս ուղղությամբ հայ լեզվաբանները դեռևս շատ անելիքներ ունեն տեսական մի շարք հարցերի ուսումնասիրության ու պարզաբանման, դասադրերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման գործում:

Այս բացը զգալիորեն լրացնում է Պ. Պողոսյանի ուսումնասիրությունը, որ հաճճարարվում է որպես ուսումնաստանողական ձեռնարկ բանասիրական ֆակուլտետների ուսանողությանը: Ցավոք վաղաժամ մահը թույլ չտվեց աշխատության հեղինակին տեսնելու իր երկարամյա ու տքնաճան աշխատանքի ամբողջական ու ավարտուն արդյունքը:

Պ. Պողոսյանը հայ լեզվաբանության անխոնջ մշակներից էր, որը զգալի ներդրում ունի հայոց լեզվի քերականության, մասնավորապես խոսքի մշակույթի և ճարտասանական արվեստի ուսումնասիրության բնագավառում: Նա սկզբունքային, ինքնատիպ մտածողության տեր գիտնական էր, փորձված և բարեխիղճ մանկավարժ, խստապահանջ՝ նախ և առաջ իր գիտական ուսումնասիրությունների նկատմամբ, որի վկայությունը նաև սույն երկհատորանոց աշխատությունն է:

Առաջին գրքի ներածական մասում զգալի տեղ է հատկացվում Հայաստանում ճարտասանական արվեստի զարգացման պատմությանը, մասնավորապես վկայակոչվում են դեռևս Տիգրան Մեծի ժամանակներից հայտնի հայ ճարտասաններ Տիգրանի որդի Արտավազը, Տիրանը, որը նաև հմուտ քերական էր և Ցիցերոնի գնահատմամբ՝ «ժամանակին իր գիտության համար բարձր պատվի արժանի մարդ»:

Ճարտասանությունը հայոց դպրոցներում լայն տարածում է ստացել Ե դարի սկզբներին, երբ հայերն արդեն ունեին նշանավոր հեղուկներ և ճարտասանության ճանաչված տեսաբաններ, ինչպիսիք էին Մովսես Խորենացին, որը հայտնի էր արդեն ճարտասանության նախակրթության իր ձեռնարկով

(«Պէտք»), նրա կրտսեր եղբայրը՝ Մամբրեն, որը ճարտասանության այս բնագավառում իտրանալու և հմտանալու շնորհիվ «Վերծանող» մականունն էր ստացել, այնուհետև՝ Դավիթ Անհաղթը, Աբրահամ հոետորը և ուրիշներ:

Ինչպես նկատում է հեղինակը, որքան էլ այս շրջանում ճարտասանական արվեստը ծաղկում է ապրել, այնուամենայնիվ, մի ամբողջ հազարամյակ (և՛—ԺԷ դարեր) այն լուրջ առաջնության չի ունեցել և նորից ձևավորվում է միայն ԺԷ դարից հետո՝ նշանավոր քերական, ճարտասան և չոփհաննես Հոլովի կողմից, որն իր «Համառոտութիւն ճարտասանական արուեստի» արժեքավոր աշխատությամբ ներկայացնում է հայ ճարտասանական, ոճաբանական տերմինաբանությունը, տալիս է մեր լեզվի ու խոսքի ոճական համակարգի առաջին գիտական պատկերացումը, դասակարգում փոխակերպություններն ու ձևերը, պարբերության, խոսքի այլ միջոցների ըմբռնումները:

Հետագայում արդեն հայերենի ոճաբանության ու ճարտասանական արվեստին վերաբերող հարցերը քննարկվում են ԺԸ դարի քերականագետներ Խաչատուր Էրզրումեցու, Մխիթար Սեբաստացու, Ս. Ազոնցի, իսկ ապա՝ Էդուարդ Հյուրմուզի, Ա. Գարագաշյանի, Ս. Գամթարյանի (ԺԺ դար) և այլոց ուսումնասիրություններում: Կարելի է ասել, որ նշված հեղինակների գործերով էլ ավարտվում են ոճաբանության, ճարտասանական արվեստի հարցերի քննությունը, և մինչև 20-րդ դարի 50-ական թվականները հայ լեզվաբանները այս հարցերին նվիրված որևէ ուսումնասիրություն չեն գրում:

Պողոսյանը հանգամանորեն շարադրում է խոսքի տեսության, լեզվի և խոսքի փոխհարաբերության մասին լեզվաբանության մեջ եղած հիմնական դրույթներն ու ըմբռնումները՝ սկսած Ֆ. Սոսյուրից մինչև մեր ժամանակի ուսու և հայ լեզվաբանները:

Զիմամալայնով այս հարցում հայ լեզվաբանության մեջ առաջ քաշված տեսակետների հետ, նա նշում է նաև իր հայեցակետը և գտնում, որ լեզուն միջոց է մտածողության գործընթացը և դրա արդյունքը ուրիշներին հաղորդելու համար, ուստի և «խոսքային գործունեության» էությունը ճիշտ հասկանալու համար նախ այն պետք է քննել մտածողության գործունեության հետ ունեցած անխզելի կապի մեջ: Քանի որ մարդկային մտածողությունը, մտածողական գործառույթը չի կարող լինել առանց լեզվական կերպավորման, իսկ լեզվական գործառույթունն էլ՝ առանց մտածողական գործառության, ուրեմն այս երկու կարգերը պետք է ուսումնասիրվեն փոխադարձ կապի մեջ և ոչ թե հակադրվեն միմյանց, ինչպես նկատելի է առանձին լեզվաբանների գործերում: Մտածելու կարողության ամեն մի իրացում մտածությունն է: «Ու-

րեմն լեզվի՝ խոսելու կարողության իրացումը, առարկայացումը, նյութականացումը, նրա գոյը խոսքն է,— եզրակացնում է լեզվաբանը,— որը մտածության նման երկակի նշանակություն ունի»: Այն մի իմաստով խոսելու գործընթացն է, «Խոսողության (եթե քանավոր է), իսկ մյուս նշանակությամբ խոսք ասելով հասկանում ենք մտածության արդյունքի լեզվական արտահայտությունը...»: Հետևաբար, մտածողությունն ու լեզուն, մտածողությունն ու խոսքը, դատողությունն ու նախադասությունները ոչ միայն համանման հասկացություններ են, այլև հասկացություններ, որ, կարելի է ասել՝ միևնույն երևույթներն են՝ տարբեր հայեցակետերի տակ առնված: Լեզվի, խոսքի և նախադասության փոխհարաբերության հարցում Պողոսյանը մի շարք ինքնուրույն դատողություններ է առնում, նշում իր մտեցումները հիշված հարցերում, ուր կան վիճելի ըմբռնումներ: Մեզ համար անընդունելի է նրա այն դրույթը, թե «լեզվի և նախադասության միջև ստորակարգության աստիճանում միջին դիրք է գրավում խոսքը, որը որևէ նյութի կամ խնդրի շուրջը կառուցվածքորեն ձևավորված, հոգեբանական հանգամանքներով պայմանավորված, տրամաբանորեն կազմակերպված մտքերի ամբողջություն է... լեզուն իր բոլոր գործառույթունները կատարում է ոչ թե նախադասության, այլ խոսքի միջոցով»:

Լեզուն իբրև հաղորդակցության միջոց, իբրև ընդհանուր, վերացական հասկացություն, նյութական, առարկայացված դրսևորում է ըստանում խոսքի միջոցով, և հաճախ այլ բան չէ, քան նախադասություններից բաղկացած մի համակարգ, որն ապահովում է հաղորդակցումն ու փոխադարձ ըմբռնումը, այլ կերպ ասած՝ խոսողությունը լեզվական պոտենցիալ կարողության գործադրություն է, իսկ նախադասությունը, ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Զահուկյանը, այն միավորն է, որի մեջ հանդես են գալիս լեզվական բոլոր իմաստներն ու ձևերը:

Աշխատության այս բաժնում հանգամանորեն քննարկվում են խոսքի տրամաբանական և հոգեբանական հիմունքները, խոսքի դրսևորման եղանակները, ամենայն խորությամբ ուսումնասիրվում պարբերությունը, նրա քերականական և ոճական առանձնահատկությունները:

Աշխատության երկրորդ մասը նվիրված է խոսքի նյութական բաղադրիչների ոճական կիրառություններին՝ սկսած հնչյունական համակարգից (քարեհնչյունություն, նվազայնություն և ներդաշնակություն, հնչերանգ, ելևէջում և այլն) մինչև բառապաշարային, ձևաբանական, շարահյուսական կարգերը: Այստեղ մեր լեզվի բառապաշարի ոճաբանական շերտավորումը կատարվում է ըստ տարժամակա հայեցակետերի, ուր առանձնացվում են բառերի բազմաթիվ շերտեր, որոնցից լու-

րաքանչյուրը ոճական յուրահատուկ երանգավորում ունի գործառական տարբեր ոճերում:

Աշխատության հիմնական արժանիքներից մեկն այն է, որ այստեղ առաջին անգամ հանգամանորեն տրվում է մեր լեզվի քերականական համակարգի ոճաբանական քննությունը, նշվում ձևաբանական, շարահյուսական յուրաքանչյուր կարգի ոճական նրբերանգներն ու նրանց ոճական կիրառությունները:

Որքան էլ այս բաժնում հեղինակը փորձում է հիմնական ուշադրությունը բևեռել քերականական այն կարգերի և իրողությունների վերլուծության վրա, որոնց ոճական արժեքն ակնհայտ է, այնուամենայնիվ այստեղ քիչ չեն նաև այն կարգերի քննության դեպքերը, որոնք զուտ քերականական արժեք ունեն և կարելի է ասել՝ ոճական առումով չեզոք են, ուստի և այդ հարցերին հեղինակն այստեղ կարող էր նաև չանդրադառնալ, հատկապես նկատի ունենալով, որ որանք խիստ ծանրաբեռնում են ո՛ւսումնական ձեռնարկը: Այս առումով հատկապես նկատի ունենք կապերին, շտղկապներին, թվականներին, որոշ դերբայներին՝ նկիրված հատվածները, որոնք հեղինակի իսկ վկայությամբ՝ «համարյա չունեն ոճական լիցքավորումներ», և որոնց դերը խոսքում ավելի շատ անվանողական-քերականական է, քան հուզաարտահայտչական: Կամ՝ բայերի ամենակարևոր ոճական առանձնահատկություններից մեկը հեղինակը համարում է վերաբերմունքը և ավելացնում, որ զգալի թվով բայեր կարող են արտահայտել զանազան կարգի (դրական կամ բացասական բնույթի) վերաբերմունք, «որոնք գնահատողական արժեք ունեն և կարևոր դեր են խաղում հատկապես բացասական ու ժխտական երևույթները պատկերելու, գեղարվեստական երկում զանազան կերպարներ ըստեղծելու գործում»: Եվ ապա տրվում է բացասական վերաբերմունք արտահայտող բայերի մի ամբողջ ցանկ, որը մեր կարծիքով այստեղ անհրաժեշտ չէ, քանի որ հիշյալ բայերի ոճական արժեքի մասին, որպես ոճաբանորեն հատուկ երանգավորում ունեցող բառերի, արդեն իսկ խոսվել է բառապաշարի համապատասխան բաժնում:

Հայ ոճաբանական գրականության մեջ մինչև օրս էլ պատշաճ ուշադրություն չի դարձվել շարահյուսական կարգերի, շարահյուսական տարբեր կառույցների ոճական առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Սույն աշխատանքը արժեքավորվում է նաև այս առումով: Հեղինակը իրավացիորեն տարբերակում է գրական լեզվին և ժողովրդական հայերենին քնորոշ շարահյուսական կառույցները, հատկապես նշում ժողովրդական մտածողությանը յուրահատուկ այնպիսի կառույցներ, որոնք ոճաբանական ելակետով ցայտն չեն ուսումնասիրված (զուգադասություն, շա-

րահյուսական սերտանում, հատկաբանություն և այլն):

Միևնույն ժամանակ նաև հարուստ է ամենայն մանրամասնությամբ են ներկայացված լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցները: Այս բաժինը ներառում է լեզվի գեղարվեստական բոլոր միջոցներն ու ոճական հնարանները, որոնք գործ են ածվել դեռևս ժողովրդական բանահյուսության և հայ պատմագրության մեջ, գեղարվեստական գրականության տարբեր ժանրերում, ինչպես նաև՝ գործառական մյուս ոճերում: Ոճական արտահայտչամիջոցներն ուսումնասիրվում են երկու խմբով՝ քերականական փոխակերպություններ և քերականական ձևեր: Փոխակերպությունների շարքում (որը ոճաբանության մեջ մինչև այժմ ուսումնասիրվել է որպես լեզվի պատկերավորման միջոց) առաջին անգամ հանգամանորեն քննվում են ոճական այնպիսի իրողություններ, որոնց մասին համեմատաբար քիչ է խոսվել (մասնավորապես՝ փոխակերպում, անժանկություն, նրբաբանություն, կրկնափոխաբերություն և այլն), և ապա՝ այստեղ բառերի փոխակերպություններից առանձնացվում են նաև նախադասությունների փոխակերպությունները՝ նկատի առնելով, որ խոսքի մեջ ինչպես բառերը, այնպես և նախադասությունները կարող են գործածվել ոչ ինքնաբանական, այսինքն՝ փոխաբանական նշանակությամբ, որոնց փոխակերպությունները խոսքը դարձնում են բազմազան ու հետաքրքրական, պատկերավոր ու բանաստեղծական: Ի թիվս ոճաբանության մեջ մինչև այժմ ընդունված շարահյուսական մի շարք կարգերի (այլաբանություն, շրջադասություն, չափազանցություն և այլն) այստեղ առաջին անգամ ուսումնասիրվում են նաև բանաշրջումը, դիմափոխությունը, փոխակարգությունը, տարասությունը և այլն: Ոճաբանության մեջ, առավել ևս՝ ճարտասանական արվեստում ոճական յուրահատուկ երանգավորում ունեն արտահայտչական միջոցները, որոնք կոչվում են նաև ճարտասանական ձևեր կամ՝ դարձույթներ: Սըրանք մտքի արտահայտման յուրահատուկ եղանակներ ու միջոցներ են, ոճական այնպիսի հնարաններ, որոնք կազմվում են բառերի, քառակապակցությունների և հաճախ նաև նախադասությունների ինքնաբանական գործածություններով և դրանով իսկ տարբերակվում փոխակերպություններից: Նշված ձևերի գործածությամբ խոսքն ամենից առաջ օժտվում է հուզականությամբ ու արտահայտչականությամբ, բազմապատկվում է խոսքի ներգործությունը ընթերցողի կամ ունկնդրի վրա, ասածը դարձնում վառ ու տպավորիչ և, ինչպես ընդգծում է հեղինակը՝ «Դրանք միաժամանակ ծառայում են գեղագիտական մի շարք կարևոր նպատակի՝ խոսքին տալիս են հաճելիության գրավչականությունը և հանդես գալիս իրեն գեղարվեստական խոսքի

կարևոր տարր է ընդհանրապես խոսքի գեղարվեստականության միջոց և ձևազարդության պայման:

Ուշադրության արժանի է ձևերի դասակարգման սկզբունքը, ըստ որի առանձնացվում են հավելումով, գեղչումով, ցմահությանը և ներհակությանը կազմվող ձևեր: Նմանությամբ կազմվող ձևերից հայ ոճաբանության մեջ առաջին անգամ տարբերակվում են շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք մի դեպքում առաջանում են միևնույն կամ ցմահ կառուցվածք ունեցող երկմասյա շարահյուսական հուսադաս կապակցությունների կուտակումով, իսկ մեկ այլ դեպքում՝ երբ նախադասությունը կամ ցրա իմաստային հատվածները միևնույն քերականական-շարահյուսական կաղապարով են կառուցվում: Հիշյալ ձևերից առաջինը հեղինակն անվանել է «եղիշեական»՝ նկատի ունենալով, որ հայ հին գրականության մեջ ոճական այս հնարանը առաջին անգամ իբրև ձև գործ է անվել Եղիշեի Գշաճավոր երկում, որը, սակայն, իբրև արտահայտման եղանակ, գալիս է դեռևս Աստվածաշնչից: Երկրորդ ձևը անվանել է «նարեկյան», քանի որ ճարտասանական այս ձևը «Մատյան ողբերգության» պոեմում խոսքին արտահայտչականություն և հուզական երանգավորում հաղորդող հիմնական միջոցներից է:

Իրենց ոճական կշռությամբ բառերի ձևերից զգալիորեն տարբերվում են նախադասությունների ձևերը, որոնց հուզական երանգավորումը հատկապես գեղարվեստական խոսքում պայմանավորված է ոչ թե բառերի կամ բառակապակցությունների յուրահատուկ գործածությամբ, այլ ամբողջ նախադասության կառուցվածքի և մտքի արտահայտման հատուկ եղանակով:

Մինչև այժմ հայ ոճաբանական գրականության մեջ հիմնականում ուսումնասիրվել են այդ ձևերից միայն մի քանիսը (ճարտասանական հարց, դիմում, բացականշություն, դիմառություն), մինչդեռ սույն աշխատանքում դրանց ավելանում են նաև ճարտասանական բազմաթիվ այլ միջոցներ (բացադարձություն, թատերացում, զիջում, վերողում, միջարկում, մասնատում և այլն), որոնք խոսքին բանաստեղծականություն, արտահայտչականություն և հույզեր հաղորդելու լավագույն հնարաններ են և մեր լեզվի անկատարելի հարստությունն են:

Գործառական ոճերի քննությունը աշխատության մեջ տարվում է ոճերի տեսության առումով, որոնք հեղինակն անվանում է խոսքի տիպեր և ոճեր՝ նկատի ունենալով, որ խոսքի բուզմազանությունը պայմանավորված է ոչ միայն խոսողի անհատականությամբ, ցրա կենսավորածով, խառնվածքով ու քնածին ընդունակություններով, այլև խոսքային իրադրությամբ, նյութով, հոգեբանական մի շարք հանգամանակներով, ինչպես նաև տվյալ ժա-

մանակին բնորոշ լեզվական իրողություններով: Առաջնորդվելով այդ սկզբունքներով, Պողոսյանը Գշում է, որ «այսպես կոչված» լեզվի տարբերակները, որոնք կոչվում են գործառական կամ լեզվական ոճեր, անհատականության արդյունք չեն, ուստի և դրանք անվանում ենք ոչ թե ոճ, այլ խոսքի տիպեր... Ոճ ենք կոչում միայն անհատական (լեզվամտածողությամբ առաջացած) խոսքային տարատեսակություններ, որոնք լինում են կամ անհատական, կամ իրադրական»:

Այստեղ նկատենք, որ ոճերի գործառական դասակարգման հիմքում ամենից առաջ պետք է դրվի լեզվի կիրառության ոլորտների տարբերակման սկզբունքը՝ հաշվի առնելով հասարակական կյանքի տարբեր գործընթացներում լեզվի ունեցած դերն ու գործառությոնը, ինչպես նաև հաղորդվող նյութի իմաստաբանական, բառապաշարային, քերականական և հուզարտահայտչական առանձնահատկությունները, որոնք հիման վրա սովորաբար կատարվում է ոճերի գործառական դասակարգումը, որը սակայն չի կարևորվում տրվյալ աշխատության հեղինակի կողմից:

Ժամանակակից ոճաբանության կարևորագույն խնդիրներից մեկը գործառական ոճերի, ցրանց դրսևորման եղանակների հանգամանալի քննությունն է, քանի որ ոճերի դասակարգման եղած մոտեցումների մեջ, մեր կարծիքով, ամենապատկառաբարձ ու ընդունելի գործառական սկզբունքն է՝ և՛ գիտական, և՛ գործնական առումով, մի բան, որ հնարավորություն է տալիս ավելի համակարգված քննելու լեզվի տարբերակային ձևվերը, ցրանց կառուցվածքային, քերականական և ոճաբանական առանձնահատկությունները: Մինչդեռ այս սովորաբարվալ ուսումնասիրության մեջ բավականին քիչ տեղ է հատկացված հիշյալ հարցերի քննությանը:

Հայտնի է, որ Պ. Պողոսյանը երկար տարիներ զբաղվել է նաև ճարտասանական արմեստի հարցերով և տպագրել մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ, հոդվածներ, մասնավորապես խոսքի արվեստի, խոսքի թերությունների և արժանիքների մասին: Սույն աշխատության մեջ ևս զգալի տեղ է հատկացվում Գշված հարցերի քննությանը: Խոսքի թերությունները Գշելիս՝ ելնելով արդի հայերենի լեզվական նորմայի պահանջներից, հեղինակն անդրադառնում է լեզվական այնպիսի իրողությունների, որոնք հատկապես մեր լեզվի ժամանակակից փուլում հաճախակի են նկատվում և՛ քանավոր, և՛ գրավոր խոսքում, առավել ևս՝ թարգմանական գրականության մեջ (ոճական հավելադրություն, անհետևողականություն, ժամանակավրիպություն և այլն) և հիմնականում պայմանավորված են օտար լեզուների, մասնամորապես՝ ռուսերենի անմիջական ազդեցությամբ:

Համեմատաբար ավելի ծավալուն է օտարաբանությունների և լեզվական բաժինը, ուր

լեզվական բազմաթիվ փաստերով նշվում է քերականական օտարաբանությունների և հատկապես շարահյուսական որոշ կառույցների բացասական ազդեցությունը մեր գրական լեզվի քերականական համակարգի վրա: Այստեղ, չգիտեք ինչու, շարահյուսական որոշ կառույցներ, որոնք բնորոշ են և քավականաչափ գործածական մեր լեզվում, այդ թրվում և գեղարվեստական գրականության մեջ, համարվում են ռուսերենի անմիջական ազդեցության հետևանք: Խոսքը վերաբերում է ամորոշ դերբայով ինքնուրույն՝ առանձին կամ բառակապակցությամբ նախադասություններ կազմելու իրողությանը, գեղարվեստական գրականության մեջ ներքին խոսքի առկայությանը, խոսքի մասնատմանը և այլն: Ծանկալի կլիներ, որ այս բաժնում հստակորեն տարբերակվեին օտարաբանությունները փոխառություններից, նշվեին նրանցից յուրաքանչյուրի ոճական արժեքը գեղարվեստական խոսքում:

Որպես արժանիքներ նշվում են խոսքի հակիրճությունը, ճշտությունը, տրամաբանականությունը, նրբագեղությունը և պատկերավորությունը, որոնց առկայությունը, հեղինակի կարծիքով, պայմանավորված է երեք հիմնական գործոնով՝ ուժ, հարստություն, գեղեցկություն: ըստ որում հեղինակի կարծիքով խոսքի ուժը ներգործում է մարդու կամքի և ցանկությունների, հարստությունը՝ մտավոր կարողությունների, իսկ գեղեցկությունը՝ հոգեկան կարողությունների և զգացմունքների վրա:

Աշխատության վերջին բաժինը նվիրված է քանավեճի արվեստին (էրիստիկա), ուր հարցի համառոտ պատմությունից հետո ներկա-

յացվում են քանավեճի տեսակները, նրա բաղադրիչները, ինչպես նաև՝ քանավեճի ծամանակ հաջողության հասնելու միջոցները, որոնք ըստ հեղինակի մեռկայներն են՝ ողջախոհությունը, տրամաբանելու քնական կարողությունը, նյութի ու վստահի խոր, քավականողմանի իմացությունը, խոսքի միջոցներին լավ տիրույթները, դրանք տեղին և նրպատակին գործադրելու կարողությունը և այլն:

Պ. Պողոսյանի «Խոսքի մշակույթի և ունագիտության հիմունքներ» աշխատությունը լուրջ ներդրում է հայ լեզվաբանության մեջ, խոսքի մշակույթի և ոճաբանության խիստ անհրաժեշտ և օժանդակ ձեռնարկ ուսանողության համար, որի կարիքը վաղուց զգայվում էր:

Եվ թեև նման դեպքերում սովորաբար գրախոսություններն ավարտվում են դիտողություններով ու առաջարկություններով, ավելացնենք, որ մենք նույնպես որոշ առաջարկություններ, ցանկություններ ու վիճելի տեսակետներ ունենք սույն աշխատանքի առանձին հարցերի նկատմամբ՝ հատկապես որպես ուսումնական ձեռնարկի (ինչպես՝ աշխատության ծավալի, կառուցվածքի, օգտագործված տերմինների և այլն), որոնց մի մասը ինքնաթացա շարադրվեց, քայց քանի որ մեր նպատակը ոչ միայն աշխատության գիտական գնահատականն էր ու արժեքավորումը, այլև՝ հեղինակի երկարամյա գիտական և մանկավարժական գործունեության, նրա ողջ վստակի նկատմամբ ունեցած երախտագիտության և հիշատակի խոսքը, ուստի և քավարարվեց այսքանով:

Լ. Կ. ԵՋԵԿՅԱՆ